ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

№ 10/20/590-13
06.02.2013թ.

Հեռախոս՝ 380250
E-mail: nune@justice.am

Ի պատասխան Ձեր 26.01.2013թ. թիվ 189-ի 1 գրության

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ իրավաբան պարոն Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հանձնարարությամբ տեղեկացնում եմ, որ 2012 թվականին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակիցները ստացել են պարգևավճարներ՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ 837–Ն որոշման 3.1 կետին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 275 աշխատակիցների պարգևատրումների ընդհանուր գումարը 2012 թվականին կազմել է 45218.4 հազ. դրամ, իսկ հրատարակման ենթակա նվերներ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակիցները չեն ստացել:

Միաժամանակ, հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը պարգևատրված անձանց անվանական տվյալներ չեն ներկայացվում:

Հարգանքով՝

Նունե Խաչատրյան